# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/6-01/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան — «03» մայիսի 2017թ.
ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ):

*հանձնաժողովի անդամներ՝*

**Աղավնի Բուդոյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

**Արման Ղուկասյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Մհմՙ)

Նիստից բացակայում է՝

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ)

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/6-01/17» ծածկագրով ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակցի հետ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին.**

Կազմակերպված բանակցություններին մասնակիցը ներկա չի գտնվել:

**Հանձնաժողովը որոշեց.**

- ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն (պայմանագիր չի կնքվում):

-հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/6-01/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.**

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1-ին, 3-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Հայկ Գալստյան Ա/Ձ-ին:

4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Թեմուր Գալստյան Ա/Ձ-ին:

5-րդ, 6-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՀՈՒՅՍ-ՄՈՏԱՐ» ՍՊԸ-ին:

4-րդ, 5-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՊԱՆԻԿ» ՍՊԸ-ին:

6-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ին:

1-ին, 3-րդ չափաբաժինների մասով մյուս մասնակցի ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**3. Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել համապատասխան հարցումը,

2) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017թ. մայիսի 10-ը ներառյալ ներկայացնել Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերությամբ նախատեսված փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

4. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2017թ. մայիսի 12-ին, ժամը 10:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կարեն Համբարձումյան

Անդամներ՝

Աղավնի Բուդոյան

Արման Ղուկասյան

Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/6-01/17>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 2-ՐԴ ՉԱՓԱԲԱԺՆԻ ՄԱՍՈՎ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2017 թվականի մայիսի 03-ի թիվ 5 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/6-01/17

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/6-01/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին համառոտ տեղեկատվությունը:

| **Չափաբաժին** | **Գնման առարկայի համառոտ նկարագրություն** | **Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում** | **Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի /ընդգծել համապատասխան տողը/** | **Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն** |
|---|---|---|---|---|
| 2 | Ավտոմեքենաների անիվներ | «Մ-Բի-Ռ» ՍՊԸ | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | պայմանագիր չի կնքվում |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ»** ՊԿՀ